ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2026 թվականի N 31 - Ա

«ԽՆՁՈՐԵՍԿԻ ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՕԼՅԱ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԻՆԵ ՓԱՆԴՈՒՆՑԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով, հիմք ընդունելով «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 61-րդ կետը և Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Գանդալյանի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2026 թվականի փետրվարի 2-ից լուծել «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օլյա Բուլբուլյանի հետ 2025 թվականի հուլիսի 25-ին կնքված N 16 աշխատանքային պայմանագիրը:

2. 2026 թվականի փետրվարի 2-ից «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Արմինե Փանդունցին:

2026-01-29 18:09:45 GMT+4
Գաղտնագրման բանալի՝ 6481F-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**